ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Վ. Ի. ԼԵՆԻՆԸ ԵՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ՌԱՖԻԿ ՇԱՀԻՆՅԱՆ

Վիթխարի է պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի դերը հայ ժողովրդի ազատագրության գործում։ Հայ ժողովրդի պատմական ճակատագրում Վ. Ի. Լենինի մեծագույն դերի բազմակողմանի բացահայտումը, գիտական խորությամբ լուսաբանումն ու արժեքավորումը եղել և մնում է սովետահայ պատմագրության առաջնահերթ ու պատվավոր խնդիրը։

Հայաստանում մարքսիզմի տարածման, բանվորական-հեղափոխական շարժումների ծավալման, սոցիալ-դեմոկրատական, բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման, դաստիարակման ու ամրապնդման ամբողջ պատմությունն անխզելիորեն կապված է Վ. Ի. Լենինի անվան ու գործունեության հետ։ Անցյալ դարի վերջից սկսած Վ. Ի. Լենինը ջերմ հոգատարությամբ աճեցրեց հայ հեղափոխականների մի փայլուն համաստեղություն, որը լենինյան վեհ գաղափարներով տոգորված՝ ղեկավարեց Հայաստանի աշխատավորության հերոսական պայքարը ռուսական երեք հեղափոխությունների տարիներին և Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրությունը պրոբլեմի ուսումնասիրությունը կարևորագույն տեղ է գրավում սովետահայ պատմաբանների ուսումնասիրություններում։

Դեռևս 1920-ական թվականներին պարբերական մամուլում կովկասյան լենինյանների հին գվարդիայի ներկայացուցիչների հրատարակված հիշողությունները ցույց էին տալիս մեծ առաջնորդի սերտ կապն Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների և նրանց ղեկավար գործիչների հետ, լուսաբանում նրա դերը երկրամասի աշխատավորության մղած ազատագրական պայքարում ու ազատագրության գործում։

Հայ ժողովրդի ազատագրության գործում պրոլետարիատի մեծ առաջնորդ Վ. Ի. Լենինի դերի գնահատումը սովետահայ պատմագրության մեջ հատուկ ուսումնասիրության պրոբլեմ դարձավ վերջին երկու տասնամյակում, առանձնապես կուսակցության XX համագումարից հետո։ 1950-ական թվականների երկրորդ կեսից սկսած հրատարակվեցին նոր ուսումնասիրություններ, արժեքավոր գիտական հոդվածներ, փաստաթղթերի ժողովածուներ և հիշողություններ, որոնք գիտականորեն լուսաբանում էին Վ. Ի. Լենինի դերը Անդրկովկասի, այդ թվում նաև հայ ժողովրդի ազատագրական-սոցիալական պայքարի ու ազատագրության գործում։

Սովետահայ պատմագրության մեջ այդ արդիական պրոբլեմի ամբողջական մշակմանն առաջինը ձեռնամուխ եղավ ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանը, որը «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը» մենագրությամբ խնդիր էր դրել բացահայտել Վ. Ի. Լենինի վիթխարի դերը անդրկովկասյան, այդ թվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի կազմակերպման ու ղեկավարման, «նրանց պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու գործում»[1]։ Հեղինակի աշխատության հիմնական ատաղձը, փաստորեն, 1959 և 1960 թթ. հրատարակված հոդվածներն էին[2]։

Գ. Ղարիբջանյանն առաջադրում է և լուծում հիմնականում երկու խոմբ հարցեր։ Առաջինը անդրկովկասյան ժողովուրդների հեղափոխական ազատագրական պայքարի ֆոնի վրա Վ. Ի. Լենինի գործունեության և հայ ու ռուս հեղափոխական մտքի կապերի պատմության լուսաբանումն է՝ սկսած 1890-ական թվականներից մինչև 1917 թ.։ Երկրորդ հարցը Անդրկովկասում սովետական իշխանության համար մղված պայքարի, նրա հաղթանակի և սովետական կարգերի ամրապնդման գործում մեծ առաջնորդի գերի գնահատումն է։

Համառոտակի բնութագրելով անդրկովկասյան ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի հեղափոխական ազատագրական պայքարը մինչև 1917 թ., Գ. Ղարիբջանյանը վեր է հանել Վ. Ի. Լենինի գաղափարական ու քաղաքական ղեկավար դերը Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական, իսկ ապա՝ բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման ու ամրապնդման գործում։ Պատահական չէ, որ դեռ «90-ական թվականների երկրորդ կեսին Անդրկովկասում ստեղծված անլեգալ մարքսիստական խմբերն ու խմբակներն իրենց համարում էին «Պետերբուրգի բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» տեղական կազմակերպություններ»[3]։ Հեղինակը ցույց է տալիս Վ. Ի. Լենինի բացառիկ ուշադրությունն Անդրկովկասի, այդ թվում հայ ժողովրդի կյանքի ու պատմության, տնտեսական ու մշակութային զարգացման առանձնահատկությունների, ռուսական պրոլետարիատի հետ երկրամասի աշխատավոր զանգվածների դաշինքի, համատեղ պայքարի ու ազատագրության հեռանկարների նկատմամբ։

Գ. Ղարիբջանյանը, վերլուծելով նախահոկտեմբերյան շրջանում բուրժուա-ազգայնական կուսակցությունների ու հոսանքների դեմ հայ բոլշևիկների մղած պայքարի ընթացքը, ցույց է տալիս ինչպես Վ. Ի. Լենինի, այնպես էլ լենինյան գվարդիայի ներկայացուցիչների ջանքերն աշխատավորական զանգվածներին պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշի տակ համախմբելու գործում և ընդգծում հայ ու ռուս ժողովուրդների հեղափոխական համագործակցությունը։ Աշխատության մեջ բոլշևիկյան կուսակցության հայ գործիչների հետ Վ. Ի. Լենինի բազմաթիվ հանդիպումների, զրույցների ու նամակագրության վերլուծությամբ Գ. Ղարիբջանյանը ցույց է տալիս, թե մեծ

---

1 Գ. Ղարիբջանյան, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը, Երևան, 1960, էջ 4։

2 Գ. Ղարիբջանյան, Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը («Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 1)։ Նույնի՝ Վ. Ի. Լենինը և սովետական իշխանության ամրապնդումը Անդրկովկասում (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», հաս. գիտ, 1960, № 2)։

3 Գ. Ղարիբջանյան, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի ժողովուրդների ազատագրումը, էջ 12—13։

առաջնորդն ինչպիսի հոգատարությամբ էր աճեցնում պրոֆեսիոնալ հեղափոխականներին։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո սովետական երիտասարդ հանրապետության դեմ միջազգային իմպերիալիզմի սկսած ռազմական ինտերվենցիայի ու քաղաքացիական կռիվների օրհասական տարիներին իսկ պրոլետարիատի մեծ առաջնորդը մտահոգվում էր Անդրկովկասի ժողովուրդների ազատագրման խնդրով, ցուցումներ տալիս տեղի հեղափոխական գործիչներին, օգնություն կազմակերպում սովետական իշխանության համար նրանց մղած պայքարում։ Լուսաբանելով Անդրկովկասի աշխատավորության նկատմամբ Վ. Ի. Լենինի տածած ջերմ հոգատարությունը, Գ. Ղարիբջանյանը հանգամանորեն վերլուծում է Անդրկովկասում, այդ թվում Հայաստանում 1917—1921 թթ. հասունացած այն իրադրությունը, երբ Անդրկովկասի ժողովրդական զանգվածները, բուրժուա-ազգայնական կառավարությունների խոստումներից հուսախաբ, վերջնականապես կողմնորոշվեցին դեպի Լենինյան դաղափարները, դրանց իրականացման մեջ տեսնելով իրենց վերջնական ազատագրության ելքը։

1960-ական թվականներին Գ. Ղարիբջանյանը գրեց մի շարք աշխատություններ[4]՝ նվիրված Լենինյան թեմատիկային։ Արժեքավոր է հեղինակի «В. И. Ленин и большевистские организации Закавказья (1893—1924)» մենագրությունը։ Ժամանակին այն արժանացել է «Պրավդայի» բարձր գնահատականին։ «Նրանում,— գրել է «Պրավդան»,— առաջին անգամ լայնորեն օգտագործված են մեծ քանակությամբ հրապարակված և անտիպ նյութեր, որոնք բնութագրում են Վ. Ի. Լենինի կապերը Անդրկովկասի հետ, նրա հեղափոխական գործունեության բոլոր տարիների ընթացքում, Լենինի դերը երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների ստեղծման ու զարգացման, սովետական իշխանության հաղթանակի ու ամրապնդման համար Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորության պայքարի ղեկավարման գործում»[5]։

Կովկասի ժողովուրդների հեղափոխական պայքարի կազմակերպման գործում Վ. Ի. Լենինի դերի բացահայտման հարցին Գ. Ղարիբջանյանն անդրադարձել է նաև մի ընդարձակ հոդվածով[6], որտեղ նորահայտ փաստերով լուսաբանում է «Վ. Ի. Լենինը և կովկասյան հեղափոխական սոցիալ-դեմոկրատների փոխադարձ կապերի սկիզբն ու զարգացումը 1893—1901 թթ. մինչև Անդրկովկասում լենինյան իսկրայական կազմակերպությունների ձևավորումը»[7]։

1970 թ. լույս տեսավ Գ. Ղարիբջանյանի «Լենինը և Անդրկովկասը» մենագրության առաջին, 1973 թ.՝ երկրորդ, իսկ 1975 թ.՝ երրորդ մասը։ Հեղի-

---

4 Գ. Ղարիբջանյան, Վ. Ի. Լենինը Շվեյցարիայում էմիգրացիայի տարիներին, Երևան, 1965, նույնի՝ Լեհաստանի լենինյան վայրերում, Երևան, 1969. նույնի՝ Переписка и встречи В. И. Ленина с кавказскими большевиками в период II съезда РСДРП (в сборнике «Славные страницы борьбы и побед», Баку, 1965. նույնի՝ В. И. Ленин и большевистские организации Закавказья (1893—1924), Ереван, 1967.

5 «Правда», 15. V. 1968.

6 Վ. Ի. Լենինը և Կովկասյան հեղափոխական սոցիալ-դեմոկրատները 1893—1901 թվականներին («Պատմա-բանասիրական հանդես», 1969, № 3)։

7 Նույն տեղում, էջ 85։

նակն այս աշխատության մեջ, որն իր ամբողջականությամբ, հարցերի դրումով և հղկվածությամբ տարբերվում է նախորդներից, նորահայտ նյութերի հիման վրա գիտականորեն լուսաբանում և ընդհանրացնում է Վ. Ի. Լենինի դերն անդրկովկասյան, այդ թվում հայ ժողովրդի ազատագրական պայքարի գործում։

Հայ և անդրկովկասյան ժողովուրդների հեղափոխական ազատագրական պայքարի կազմակերպման և ղեկավարման գործում Վ. Ի. Լենինի, լենինյան «Իսկրայի» դերի լուսաբանմանն են նվիրված Կ. Մամիկոնյանի երկու ուսումնասիրությունները[8]։ Լուսաբանելով Վ. Ի. Լենինի և լենինյան «Իսկրայի» դերն Անդրկովկասում բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորման գործում, մեծ առաջնորդի ջանքերը երկրամասում սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ իսկրայական և բոլշևիկյան ուղղության հաղթանակի համար մղված պայքարում, Կ. Մամիկոնյանը համոզիչ փաստերով ցույց է տալիս, որ չի եղել անդրկովկասյան բոլշևիկների հեղափոխական շարժումների և կուսակցական աշխատանքի ոչ մի կարևոր հարց, որին Վ. Ի. Լենինը ցույց տված չիներ ղեկավար ցուցում և անձնական խորհուրդ, անմիջական օգնություն։

Վ. Ի. Լենինի բազմակողմանի աշխատանքն Անդրկովկասում սովետական կարգերի ամրապնդման համար մղված պայքարում ցույց է տրված Վ. Պարսամյանի՝ «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասյան ֆեդերացիան» ուսումնասիրության մեջ[9]։ Վ. Պարսամյանը լենինյան թեմատիկային անդրադարձել է նաև առանձին հոդվածով[10]։

Անդրկովկասյան ժողովուրդների ազատագրական պայքարում Վ. Ի. Լենինի դերի լուսաբանման պրոբլեմի ամբողջացմանն են նվիրված Խ. Բարսեղյանի մի շարք աշխատությունները, այդ թվում «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումը»[11] արժեքավոր ուսումնասիրությունը։

Հայ ժողովրդի ստեղծարար ու հերոսական աշխատանքի ուղին լուսավորել են լենինյան հանճարեղ գաղափարները, որոնք Հայաստանում տարածելու գործում մեծ դեր են խաղացել Վ. Ի. Լենինի երկերի հայերեն հրատարակությունները։ Խ. Բարսեղյանի «Լենինը հայերեն» մենագրությունը տալիս է Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների ամբողջական պատմությունը, ուր, լուսաբանելով հայ իրականության մեջ լենինյան գաղափարների տարածման և զարգացման ընթացքը, հեղինակը միաժամանակ բացահայտում է Վ. Ի. Լենինի տեսական հարուստ ժառանգության դերը

---

8 Կ. Мамиконян, В. И. Ленин и большевистские организации Закавказья (1893—1907 гг.), Ереван, 1961; նույնի՝ Борьба В. И. Ленина за создание и укрепление большевистских организаций Закавказья (1903—1905 гг.), Ереван, 1966.

9 Վ. Պարսամյան, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասյան ֆեդերացիան, Երևան 1962։

10 «Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրումը («Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, 1970, № 1)։

11 Խ. Բարսեղյան, Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումը, Երևան, 1963, նույնի՝ Լենինի հետ, Երևան, 1969, նույնի՝ Լենինի աշխատությունների հայերեն հրատարակությունների պատմությունից, Երևան, 1969։ Նույնի՝ Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպության ձևավորումը, նույնի՝ Վ. Ի. Լենինը և «Պրավդան», նույնի՝ Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմություն, նույնի՝ Հայաստանի Կոմկուսի կազմակերպումը, նույնի՝ Ստեփան Շահումյան։ Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն, Երևան, 1968 (ռուսերեն՝ Երևան, 1973)։

հայ աշխատավորության գաղափարական-քաղաքական դաստիարակության գործում, ցույց տալիս պատմական այն պրոցեսը, թե ինչպես լենինիզմը դարձավ հայ աշխատավորության աշխարհայացքն ու պայքարի մարտական դրոշը։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարում և ազատագրման գործում Վ. Ի. Լենինի դերի լուսաբանմանը վերջին շրջանում նվիրված առանձին հիշողությունների, հրատարակված ժողովածուների և ուսումնասիրությունների ոչ ծավալուն ցիկլում կարևոր ներդրում է Ա. Մնացականյանի «Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը» մենագրությունը, որով հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության ընդարձակ ֆոնի վրա պատկերում է պրոլետարիատի մեծ առաջնորդի վիթխարի դերը հայ ժողովրդի ազատագրական պայքարի գաղափարական զինման ուղղությամբ[12]։ Աշխատության մեջ Ա. Մնացականյանը գիտականորեն պարզաբանել է լենինյան ցուցումներով զինված հայ լենինյանների ու դիտակից բանվորների վճռական պայքարն իրենց ազատագրության համար։

Ա. Մնացականյանը, վերլուծելով արտասահմանյան տարագրության մեջ գտնվող հայ հեղափոխական գործիչների կյանքի ու գործունեության առանձին էջեր, նկատում է, որ նրանք «աշխատելով Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ, ռուսլյուցիոն պայքարի մեջ ավելի կոփվեցին որպես աներեր բոլշևիկներ, օտարության մեջ ևս գործեցին որպես ռուսլյուցիոն վետերաններ, իրենց ուժերը նվիրելով ցարիզմի տապալման և աշխատավորների ազատագրման մեծ պայքարին»[13]։

Մերկացնելով պատմության դաշնակցական կեղծարարներին, հեղինակը բազմաթիվ նորահայտ փաստերի մանրակրկիտ վերլուծմամբ ընդհանրացնում է Վ. Ի. Լենինի մեծ ջանքերն ինչպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման, այնպես էլ նրա վերջնական ազատագրման ուղղությամբ։

Հանգամանորեն նկարագրելով հայ ժողովրդի գոյավիճակը դաշնակցականների տիրապետության մառախլապատ օրերին, դատապարտելով հայկական բուրժուական և մանր բուրժուա-ազգայնական կուսակցությունների գործելակերպն ու քաղաքական վարքագիծը, Ա. Մնացականյանը բացահայտում է Վ. Ի. Լենինի և նրա հայ զինակիցների հմուտ տակտիկան, որը կարևոր նշանակություն ունեցավ «հայ ժողովրդի ազատագրական պայքարը ճիշտ ուղիով տանելու, այն միապետության դեմ մղվող համաժողովրդական ռուսլյուցիոն պայքարի մեջ միավորելու գործում»[14]։ «Միայն հայ բոլշևիկ լենինյաններն էին,— եզրակացնում է հեղինակը,— որ հայ ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրական պայքարը դիտեցին որպես համառուսական ռուսլյուցիոն պայքարի հզոր հորձանքի մի անբաժան մասը և միայն լենինյան սկզբունքի հաղթանակն էր, որ փրկություն բերեց հայ ժողովրդին»[15]։

---

12 Ա. Մնացականյանը հայ ժողովրդի ազատագրման գործում Վ. Ի. Լենինի դերի գնահատմանն անդրադարձել է դեռ 1961 թ. հրատարակված «В. И. Ленин и освобождение армянского народа» գրքում, որի վերլուծմանը չենք անդրադառնում, քանի որ նրանում բարձրացված հարցերը ավելի խորությամբ մեկնաբանված են հեղինակի վերջին աշխատության մեջ։

13 Նույն տեղում, էջ 179։

14 Նույն տեղում, էջ 180։

15 Նույն տեղում, էջ 206։

Անդրկովկասի ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի ճակատագրում Վ. Ի. Լենինի դերին անդրադարձել է նաև ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծ. Աղայանը[16]։ Իր մենագրության մեջ սովետական պատմագիտության նվաճումների և մի շարք նոր նյութերի հիման վրա Ծ. Աղայանը հաջողությամբ լուսաբանել է Անդրկովկասի սովետական հանրապետությունների ստեղծման որոշ առանձնահատկությունները։ Դրա հետ միասին նա ցույց է տվել Վ. Ի. Լենինի դերը Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակի և ամրապնդման գործում։ Ծ. Աղայանի աշխատության մեջ բերված են բազմաթիվ փաստեր այն մասին, թե Վ. Ի. Լենինն ինչպիսի հոգատարություն էր հանդես բերում Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ավերված ժողովրդական տնտեսության վերականգնման նկատմամբ։

Հայ ժողովրդի հեղափոխական ազատագրական շարժումների պատմության մեջ Վ. Ի. Լենինի դերի լուսաբանմանը նվիրված գրականության ընդհանուր ցիկլում արժեքավոր ներդրում է Վ. Ավետիսյանի ուսումնասիրությունը[17]։ Աշխատության մեջ, հրապարակի վրա եղած փաստական նյութի և հարուստ գրականության հենքի վրա, հեղինակը լուսաբանել է Հայաստանում մարքսիզմ-լենինիզմի տարածման և ամրապնդման սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները։ Բացահայտելով Վ. Ի. Լենինի դերը Հայաստանի հեղափոխական շարժումների պատմության մեջ, Վ. Ավետիսյանը մանրամասն վերլուծել է հայ հասարակական մտքի պատմության մեջ մարքսիզմ-լենինիզմի նշանակության հարցը, գնահատել հայ բոլշևիկների գործունեությունը, նրանց լենինյան դիրքորոշումը, նրանց ջանքերը՝ համառուսական հեղափոխական շարժման, բոլշևիկյան կուսակցության շուրջը հայ հեղափոխական ուժերը համախմբելու գործում։

Հայ ժողովրդի հեղափոխական պայքարի ու ազատագրության գործում պրոլետարիատի մեծ առաջնորդի խաղացած մեծագույն դերի վերհանումը չի վրիպել նաև սովետահայ այն պատմաբանների ուշադրությունից, որոնց ուսումնասիրությունները նվիրված են Հայաստանում սովետական կարգերի համար մղված պայքարի պատմությանը[18], հայ ժողովրդին Սովետական Ռու-

---

16 Ц. П. Агаян, В. И. Ленин и создание закавказских советских республик, Ереван, 1976.

17 Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976։

18 Ծ. Աղայան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957, նույնի՝ Великий Октябрь и борьба трудящихся Армении за победу Советской власти, Ереван, 1962; А. Элчибекян, Установление Советской власти в Армении, Ереван, 1954, նույնի՝ Октябрьская революция и победа Советской власти в Армении, Ереван, 1957, նույնի՝ Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении, Ереван, 1959; Г. Галоян, Борьба за Советскую власть в Армении. М., 1957. Ե. Հարությունյան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում, Երևան, 1957։ С. Карапетян, Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской революции в Армении, Ереван, 1959, Ս. Վարդանյան, Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան, 1957, նույնի՝ Победа Советской власти в Армении, Ереван, 1959, Գ. Ղարիբջանյան, Պայքար սովետական իշխանության համար Հայաստանում, Երևան, 1959, Ա. Մնացականյան, Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները (1917—1921), Երևան, 1961, նույնի՝ Посланцы Советской России в Армении, Ереван, 1959.

սաստանի ցույց տված օգնությանը[19], ինչպես նաև հայ և ռուս ժողովուրդների բարեկամական կապերի ու հարաբերությունների գնահատմանը[20]։

Նշված աշխատություններում հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Հայաստանում ստեղծված բավականին բարդ իրադրության վերլուծման, սովետական կարգերի հաստատման դժվարությունների լուսաբանման ընդհանուր ֆոնի վրա, ընդգծվում է Վ. Ի. Լենինի վիթխարի աշխատանքը, նրա բացառիկ ջանքերը տեղի կոմունիստական կազմակերպությունների համախմբման և նրանց ուղղություն տալու գործում։ Պրոլետարիատի մեծ առաջնորդը իր ամենօրյա ցուցումներով, ժողկոմսովետի որոշումներով էական ու անդնահատելի գեր խաղաց Հայաստանի աշխատավորության պայքարի կազմակերպման գործում։ Նշված աշխատությունների մեծ մասում իրավացիորեն ընդգծվում է ազգային հարցի ճիշտ լուծման, ազգերի և ժողովուրդների իրավահավասարության լենինյան տեսության մեծ դերը։

Լուսաբանելով սովետական կարգերի հաստատման համար հայ ժողովրդի մղած հեղափոխական պայքարը, հետազոտողներն այս առնչությամբ բացահայտում են Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ կոմունիստական կուսակցության, Սովետական Ռուսաստանի բարոյական, նյութական և ռազմական անշահախնդիր օգնությունը։ Աշխատությունների մեծ մասում լայնորեն լուսաբանվում է Վ. Ի. Լենինի դերը նորաստեղծ Սովետական Հայաստանի տնտեսական ու ռազմական հզորացման, մշակութային վերելքի, հայ և անդրկովկասյան ժողովուրդների եղբայրական բարեկամության և համագործակցության ամրապնդման գործում։

Հայ ժողովրդի պատմական ճակատագրի հարցում Վ. Ի. Լենինի խաղացած դերը այս կամ այն չափով լուսաբանվել է նաև հեղափոխական շարժումների և կոմունիստական կազմակերպությունների պատմությանը նվիրված աշխատություններում[21], առանձնապես հայ հեղափոխական գործիչների կյանքն ու գործունեությունն արտացոլող մենագրություններում[22]։

---

19 Ա. Վարդապետյան. Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին, 1920—1925 թթ., Երևան, 1959, Ս. Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրության գործում, Երևան, 1964։

20 Զ. Գրիգորյան, Հայ և ռուս ժողովուրդների բարեկամությունը (հետհոկտեմբերյան շրջան). Երևան, 1967։

21 «Հայաստանի Կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958; «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967։

22 Ա. Կարինյան, Ստ. Շահումյան (1878—1918), կյանքը և գործունեությունը, Մոսկվա, 1925, Ա. Կարինյան և Դ. Սիմոնյան, Ալ. Մարտունի—Մյասնիկյան, Երևան, 1925, Աշ. Հովհաննիսյան, Երկու բնութագիր, Երևան, 1927, Ս. Փ. Մեդվեդևա-Տեր-Պետրոսյան, Հեղափոխության հերոսը, («Ընկ. Կամո»), Երևան, 1926, Ս. Խանոյան, Սուրեն Սպանդարյան, Երևան, 1927, նույնի՝ Մելիք-Մելիքյան (Դեղուշկա), Երևան, 1928, Խ. Բարսեղյան, Ստ. Շահումյան, ժուռնալիստական-հրապարակախոսական գործունեության ակնարկ, Երևան, 1952, նույնի՝ Ստ. Շահումյան (Կյանքի ու գործունեության վավերագրական տարեգրություն), Երևան, 1968, նույնը՝ ռուսերեն, Երևան, 1973, Գ. Մնեյան, Ստ. Շահումյանի պետական և պարտիական գործունեությունը 1900—1918 թթ., Երևան, 1958, Լ. Խուրշուդյան, Ստ. Շահումյան, պետական և պարտիական գործունեությունը 1917—1918 թթ., Երևան, 1959, Г. Арутюнов, Л. Тер-Мкртчян, Жизнь и деятельность С. Спандаряна, М., 1958, Հ. Ինճիկյան, Բոգդան Կնունյանց, կյանքն ու գործունեությունը, Երևան, 1957, Ա. Մնացականյան, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, 1955, Ա. Հարությունյան, Կամո. կյանքը և ռևոլյուցիոն գործունեությունը, Երևան, 1957, Л. Шаумян, Камо, жизнь и деятельность профессионального революционера С. Тер-

Չնայած կատարված զգալի աշխատանքին, սովետահայ պատմագրությունը դեռևս լուրջ անելիքներ ունի հայ ժողովրդի ազատագրության գործում Վ. Ի. Լենինի խաղացած մեծագույն դերի վերհանման ուղղությամբ։

Սովետահայ պատմագրության մեջ դեռևս ըստ ամենայնի և բազմակողմանիորեն չի լուսաբանված Վ. Ի. Լենինի դերը Հայաստանում սոցիալիստական վերափոխումների գործում, առանձին ուսումնասիրությամբ չի ամփոփված մեծ առաջնորդի և նրա հայ շատ զինակիցների բազմակողմանի կապերի ու հարաբերությունների հարուստ պատմությունը, չեն առանձնացված և վերլուծված հայ կոմունիստների նամակագրությունները Վ. Ի. Լենինի հետ և մեծ առաջնորդի անմիջական ու կենդանի օգնությունն ու ցուցումները իր հայ բարեկամներին։

Տասնամյակներ են անցել պատմական այն ժամանակներից, երբ ռուս և Ռուսաստանի ճնշված ու հարստահարված ժողովուրդները մեծ Լենինի առաջնորդությամբ նետվեցին ազատագրական պայքարի հորձանուտը և բուրժուակալվածատիրական Ռուսաստանի փլատակների վրա կատարեցին աշխարհում առաջին սոցիալիստական հեղափոխությունը։ Համաշխարհային պրոլետարիատի մեծ առաջնորդի և նրա ստեղծած կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Ռուսաստանի ճնշված ժողովուրդները, այդ թվում հայ ժողովուրդը ձեռք բերեցին իրենց սոցիալական և ազգային ազատագրությունը։ Ռուսաստանի ազատագրված ժողովուրդները նոր հասարակարգի կառուցման ճանապարհին անցան բազմաթիվ փորձություններ, փառապանծ հաղթանակների հերոսական մի ուղի։

Եվ այժմ, երբ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության պատմական հաղթանակի 60-ամյա բարձրակետից հետադարձ հայացք ենք ձգում հայ ժողովրդի անցած հերոսական ուղուն, ավելի քան ակնհայտ է դառնում Վ. Ի. Լենինի մեծագույն դերը հայ ժողովրդի ազատագրության ու վերածննդի գործում։

В. И. ЛЕНИН И ПРОБЛЕМА ОСВОБОЖДЕНИЯ АРМЯНСКОГО НАРОДА В АРМЯНСКОЙ СОВЕТСКОЙ ИСТОРИОГРАФИИ

РАФИК ШАГИНЯН

Резюме

Начиная с 20-ых гг. советские армянские историки стали обращать особое внимание на освещение роли В. И. Ленина в освобождении армянского народа. Однако всестороннее исследование этой проблемы началось только с середины 50-ых гг. В 50—70-ые гг. она стала предметом специального исследования многих историков и нашла всестороннее и глубокое освещение в трудах Г. Гарибджаняна, Ц. Агаяна, К. Мамиконяна, В. Парсамяна, Х. Барсегяна, А. Мнацаканяна, В. Аветисяна и др.

Петросяна, М., 1959, Ռ. Փաշինյան, Հայ ռևոլյուցիոն կանայք, Երևան, 1963, Հ. Կարապետյան, Մեծ պայքարի մարդիկ, Երևան, 1963, Վ. Ավետիսյան, Սուրեն Սպանդարյան, Երևան, 1957, նույնի՝ Ստեփան Շահումյան, Կենսագրական ակնարկ, Երևան, 1953։